



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբեր, 2020 թվականի № 63-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2020 թվականի դեկտեմբերի 24-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N Հ.Մ./02-181/20 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Ընկերության 2021 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 դեկտեմբեր, 2020 թվականի

ք. Երևան

\_\_\_\_\_ Ա. Շիրինյան  
 29 դեկտեմբեր, 2020թ.

**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության  
 2021 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին  
 բաժինների համամասնությունները**

N	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժիններ	Տեսալսողական ծրագրերի առանձին բաժինների հեռարձակման ծավալ (ժամ)	
		«Առաջին» ալիք	Միջազգային ալիք
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1,000	1,200
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1,950	2,000
3	Զվարճալի-ժամանցային	1,500	1,400
4	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	650	860
5	Մշակութային	750	950
6	Կրթական, մանկապատանեկան	400	400
7	Մարզական	750	100
8	Երաժշտական	1,410	1,600
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	350	250
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>8,760</b>	<b>8,760</b>